

ՀԱՊՀ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

01.01.2020 - 31.03.2020 ԹԹ.-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մինչև 16.03.2020թ. Կազմակերպությունն իրականացրել է իր բնականոն գործունեությունը: 16.03.2020թ.-ին ՀՀ կառավարության 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվեց արտակարգ դրություն:

01.01.2020 - 16.03.2020թթ. Ժամանակահատվածում.

1. Հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեն գումարել է 7 նիստ:
2. Իրականացվել են տարեկան համաժողովի նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես. հրավիրվել և անց են կացվել կառուցվածքային ստորաբաժանումների ժողովներ, գումարվել է արհկոմիտեի նիստ, որտեղ քննարկվել են Կազմակերպության 2019թ.-ի տարեկան գործունեության մասին հաշվետվության նախագիծը, 2019թ.-ի բյուջեի կատարողականը, սեփականության օգտագործման 2019թ.-ի տարեկան հաշվետվությունը, 2020թ.-ի բյուջեի նախահաշվի նախագիծը, 2019թ.-ի կանոնադրական և ֆինանսական գործունեության ստուգումների վերաբերյալ Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը, Կազմակերպության ծրագրերի կանոնակարգում առաջարկվող փոփոխությունները և լրացումները:
3. Արհկոմիտեի որոշմամբ, համաժողովի կողմից Կազմակերպության 2020 թվականի բյուջեի հաստատումից հետո դրամական նվերներ են տրվելու. ա) Բանակի օրվա կապակացությամբ «Ուրախություն և տոն» ծրագրով՝ Կազմակերպության տղամարդ անդամներին, բ) «Ուշադրություն» ծրագրով՝ Կազմակերպության մեկ անդամի, իսկ «Սոցիալական օգնություն» ծրագրով դրամական օգնություն կտրվի Կազմակերպության մեկ անդամի:

Համաժողովի հրավիրումը հետաձգվել է անորոշ ժամկետով՝ մինչև համապատասխան պայմանների հաստատվելը: